

## **ՀՀ Արմավիրի մարզպետ Էդվարդ Յովհաննիսյանի շնորհավորանքի խոսքը Ընտանիքի միջազգային օրվա առթիվ**

15.05.2022

Արմավիրի մարզի հարգելի բնակիչներ, սիրելի հայրենակիցներ, Ջերմորեն շնորհավորում եմ բոլորիս Ընտանիքի միջազգային օրվա կապակցությամբ:

Ընտանիքը պետության կարևորագույն հենասյուններից և մարդկային հասարակության ամենաառանցքային սոցիալական ինստիտուտներից մեկն է: Այն՝ որպես հասարակության հիմնական տարր, եղել և մնում է մարդկային արժեքների և մշակույթի պահպանողն ու տարածողը: Ընտանիքի շնորհիվ ամրանում ու զարգանում է պետությունը, աճում է ժողովրդավարությունը և գերակշռում է համերաշխության մթնոլորտը:

Այս ամենն ընտանիքով պայմանավորված այն գերակայություններն են, առանց որոնց անհնար է պատկերացնել հանրային կյանքի տարբեր ոլորտների զարգացումն ու հանրության բնականոն և արդյունավետ կենսագործունեությունը:

Եկեք ամուր ու անսասան պահենք մեր ընտանիքները՝ դրանով իսկ նպաստելով մեր ազգային ու ավանդական արժեքների պահպանմանը, պետության առաջընթացին և հարատևությանը:

Վերստին շնորհավորելով բոլորիս այս սիրով ու ջերմությամբ լեցուն օրվա առթիվ՝ խաղաղություն, համերաշխություն, անսահման սեր ու երջանկություն եմ ցանկանում մեր ընտանիքներին: